

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

12.09. 2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝
Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Ս.Դավթյանը, Լ.Պետրոսյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի
պետ Ա.Սաֆյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ
Մ. Պետրոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ
Ա. Ավագյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ
Գ.Թորոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների
բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների
բաժնի գլխավոր մասնագետ Մ.Երիցյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների
բաժնի գլխավոր մասնագետ Գ.Պետրոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1.«Անհատական բնակարանային շինարարության մասին» Ձև ԱԲԾ
վիճակագրական միանվագ հետազոտության հարցաթերթն ու լրացման
ցուցումների նախագիծը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Անհատական բնակարանային շինարարության մասին» Ձև ԱԲՇ միանվագ գիտազոտության հարցաթերթը՝ համաձայն հավելված 1-ի և «Անհատական բնակարանային շինարարության մասին» Ձև ԱԲՇ միանվագ հետազոտության հարցաթերթի լրացման ցուցումները՝ համաձայն հավելված 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012թ. սեպտեմբերի 13-ի «Անհատական բնակարանային շինարարության մասին» Ձև ԱԲՇ միանվագ հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին թիվ 23-Ա որոշումը:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :

2. «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև թիվ 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» (անկախ ինքնաթիռի, ուղղաթիռի պատկանելության) Ձև թիվ 30-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 38-Ն որոշումն» ու «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 40-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև թիվ 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը, «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» (անկախ ինքնաթիռի, ուղղաթիռի պատկանելության) Ձև թիվ 30-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը համաձայն հավելվածների, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 38-Ն» ու «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 40-Ն» որոշումները:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :

3. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացված «Անասնաբուժական մթերքի արտադրության մասին» Ձև 24-ԳՏ-Վ (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Ավագյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ «Անասնաբուժական մթերքի արտադրության մասին» Ձև 24-ԳՏ-Վ (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

4. «2011-2013թթ. ընթացքում Դանիայի (գլխավոր գործընկեր), Գերմանիայի (կրտսեր գործընկեր), Շվեդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների հետ համագործակցությամբ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի արդյունքներով մշակված՝ ըստ ծրագրի բաղադրիչների ճանապարհային քարտեզների իրականացման վերաբերյալ առաջարկությունների մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշվեց՝

Հաստատել «2011-2013թթ. ընթացքում Դանիայի (գլխավոր գործընկեր), Գերմանիայի (կրտսեր գործընկեր), Շվեդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների հետ համագործակցությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի արդյունքներով մշակված՝ ըստ ծրագրի բաղադրիչների ճանապարհային քարտեզների իրականացման վերաբերյալ առաջարկությունները»՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/ :

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1. Հաղորդում՝ Լատվիայի Ռիգա քաղաքում 2013 թվականի օգոստոսի 12-ից 16-ը Եվրոպական Միության Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման Թայեքս գործիքի շրջանակում «Հարմոնիզացված սպառողական գների ինդեքս» թեմայով ուսումնական այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ.Մարտիրոսյան, Մ.Երիցյան, Գ.Պետրոսյան/

5.2. Հաղորդում՝ Կորեայի Հանրապետության Բուսան քաղաքում 2013 թվականի օգոստոսի 26-ից 31-ը Բնակչության գիտական ուսումնասիրությունների միջազգային միության ԲԳՈՒՄՄ-ի (IUSSP) Բնակչության հարցերով 27-րդ միջազգային կոնֆերանսին մասնակցելու և «Կյանքի սպասվող տևողության սեռային առանձնահատկությունները Կովկասյան 2 երկրներում՝ Հայաստանում և Վրաստանում» հետազոտական աշխատանքը ներկայացնելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կոյունջյան/

5.3. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 4-ից 6-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Որակը վիճակագրությունում. վարչական տվյալներ և պաշտոնական վիճակագրություն» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Ա.Սաֆյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

04.10.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝
Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Ս. Դավթյանը, Լ. Պետրոսյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը,
ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև թիվ 34-ՔԱ (տարեկան), «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 12-ՔԱ (եռամսյակային), «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին՝ Ձև թիվ 1-չարտեր (եռամսյակային), «Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» Ձև թիվ 35-պատահար (ամսական), «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց կառույցների մասին» Ձև թիվ 1-ճան (տարեկան), «Արդյունաբերական նշանակության երկաթուղային տրանսպորտի աշխատանքի

մասին» Ձև թիվ 1-երկաթ (տարեկան), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» Ձև թիվ 65-երկաթ (տարեկան), «Մետրոպոլիտենի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-մետրո (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության մասին» Ձև թիվ 3-ավտո (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» Ձև թիվ 1-տրանսպորտ (տարեկան), «Հեռագրական կապի մասին» Ձև թիվ 31-կապ (տարեկան), «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 41-կապ (տարեկան), «Հեռուստատեսության, ռադիոհեռարձակման և ռադիոկապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 51-կապ (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և համապատասխանաբար «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 41, 39, 37, 44, 17, 24-Ն, և ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 14, 19, 16, 17, 24, 25 և 27-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշվեց՝

Հաստատել նշված վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները (թվով 13 հաշվետվական ձև) և համապատասխանաբար ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 41, 39, 37, 44, 17, 24-Ն, և ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 14, 19, 16, 17, 24, 25 և 27-Ն որոշումները:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «510 850.3» թիվը փոխարինել «481 701.86» թվով, 3-րդ տողի «94 590.0» թիվը փոխարինել «91 230.0» թվով, 4-րդ տողի «82 505.75» թիվը փոխարինել «82 951.2» թվով, ընդամենը տողի «705 836.49» թիվը փոխարինել «673 773.5» թվով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

3.«Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական հաշվետվության ամփոփ ձևերը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հավանությանն արժանացնելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ.Կոյունջյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ նշված վիճակագրական հաշվետվության ամփոփ ձևերին համաձայն հավելվածների:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

4.«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ձև թիվ 01-ԵՀԱ (եռամսյակային), ձև թիվ 01-ԵՀԱ (տարեկան), ձև թիվ 70-ՏԱ (տարեկան) և ձև թիվ 71-ՏԱ (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ նշված վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

5. «ՀՀ ՎՊԽ 2013 թվականի հուլիսի 19-ի թիվ 20-Ա, թիվ 22-Ա և 2013 թվականի օգոստոսի 28-ի թիվ 31-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Նշանյան/

Որոշվեց՝

ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման ժամկետի համապատասխան (նոյեմբերի 10-30-ը ներառյալ), ՀՀ ՎՊԽ անհատական որոշումներով հաստատված մի շարք իրավական ակտերում կատարել ժամկետային փոփոխություններ:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2013 թվականի օգոստոսի 5-ից 16-ը Արժույթի միջազգային հիմնադրամի ինստիտուտի հրավերով, «Եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով ուսուցողական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/

6.2. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 17-ից 18-ը Եվրամիության հարևանության և համագործակցության քաղաքականության գործիքների շրջանակում «Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգ» /ԵՀՀԲ-ԷՏՄ/ նախագծի Ղեկավար կոմիտեի նիստին և Ծրագրի ազգային համակարգողների տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող Յու. Պողոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

28.10.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝
Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ս.Դավթյանը, Լ. Պետրոսյանը,
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ
Կ.Կույումջյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության
վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ.Տիտիզյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի
առաջատար մասնագետ Ռ.Շաբոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ
Լ.Քալանթարյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի
առաջին կարգի մասնագետ Ս.Շախգելոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի
գլխավոր մասնագետ Գ.Խաչատրյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1.«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Արձանագրված վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների
վերաբերյալ» Ձև 85 (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական
հաշվետվության ձևին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 116
և թիվ 117 արձանագրային որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին.» հարցը:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ ՀՀ առողջապահության նախարարության «Արձանագրված վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների վերաբերյալ» Ձև 85 (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին և ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 18-ի «Ձև թիվ 85 ԱՄՍ «Առանձին տարափոխիկ և մակաբուծական հիվանդությունների մասին» թիվ 116 և «Առանձին տարափոխիկ և մակաբուծական հիվանդությունների մասին» Ձև թիվ 85 ՏԱՐԱՓՈՒՄԻԿ թիվ 117 վարչական վիճակագրական հաշվետվային ձևերին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումները:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

2.«Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան) և Ձև 1-ՏԳ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների և դրանց լրացման հրահանգների նախագծերը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հունվարի 27-ի «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան) և (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» թիվ 03-Ն և 04-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/

Որոշվեց՝

Հաստատել «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան) և «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները» համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հունվարի 27-ի «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան) և (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին թիվ 03-Ն և 04-Ն որոշումները:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/:

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 2-ից 4-ը «Բիզնես ռեգիստրները զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների համար» թեմայով նստաշրջանին և բիզնես ռեգիստրների փորձագետների խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Գ. Խաչատրյան/

3.2. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 23-ից 25-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի կողմից կազմակերպված «Վիճակագրության տարածումը, ներառյալ PC-Axis-ի օգտագործման վերաբերյալ ուսուցում» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Ռ. Շաբոյան, Ս. Շախգելյան/

3.3. Հաղորդում՝ Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 2-ից 4-ը Եվրոպական հանձնաժողովի Արևելյան գործընկերության երկրների երիտասարդական քաղաքականության աջակցության տարածաշրջանային ստորաբաժանման կողմից «Արևելյան գործընկերության տարածաշրջանի երիտասարդական քաղաքականության աջակցության ծրագրի» շրջանակում կազմակերպված «Ազգային աշխատանքային խմբերի ուսուցանողների համար դասընթաց» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

3.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 2-ից 11-ը Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային համաժողովին (ԱՎՄՀ) մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

3.5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Գելենջիկ քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 16-ից 18-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և Ռուսաստանի վիճակագրության դաշնային ծառայության կողմից կազմակերպված «Մարդահամարները և միգրացիայի վիճակագրությունը ԱՊՀ երկրներում» խորագրով բարձրաստիճան համաժողովին և ԱՊՀ մասնակից-երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների Խորհրդի 50-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Կ.Կոյունջյան/

3.6. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը Մարդահամարների ու կացարանների համատարած հաշվառման փորձագետների խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/: